«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Քննադատական մտածողության զարգացումը անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում

Առարկան՝ անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Խլոյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՊՄՀ-Ի հենակետային վարժարան, ա/դ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……..3

Գրական ակնարկ……..5

Քննադատական մտածողության նպատակն ու խնդիրները……6

Քննադատական մտածողության զարգացումը անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում……..9

Եզրակացություն……13

Օգտագործված գրականության ցանկ……..15

Ներածություն

Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերաիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը: Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողությունը է:

Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները: Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Այս մոտեցումը միաժամանակ հին պատմական արմատներ ունի: Հայտնի են Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ. Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝ աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել: Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը: Քննադատական

մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք: Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողության զարգացումը կարևորվում է հանրակրթության բոլոր աստիճաններում, ընդսմին յուրաքանչյուր աստիճանում ունի իր խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, միջոցները, տեխնոլոգիաները, աշխատանքի կազմակերպման ձևերը: Ավագ դպրոցական տարիքում քննադատական մտածողության զարգացումն առավել է կարևորվում. պատանեկության կենսափուլում առաջնային են դառնում կենսական խոր բովանդակությամբ հարցադրումները, մասնագիտական կողմնորոշումները, աշխարհի նկատմամբ գնահատողական վերաբերմունքը, ինքնահաստատման, ինքնադրսևորման, ճանաչողական գործունեության նոր ձևերի տիրապետման պահանջմունքը, որոնք պահանջում են քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտություն:

Գրական ակնարկ

Մտածողությունը ճանաչողական գործունեության տեսակ է: Մտածողությունն առաջին հերթին իրենից ներկայացնում է ճանաչողական մոտիվացիա: Ըստ հոգեբանների մտածողությունն այն իմացական գործընթացն է, որի օգնությամբ մարդը կարողանում է ստացված դուրս գալ անմիջական զգայական արտացոլման միջոցով տվյալների հատկանիշները: Մտածողությունը շրջապատող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի իմացությունն է: Մտածողությունը միջնորդված և ընհանրացված իմացություն է, ունի սոցիալական պայմանավորվածություն, իսկ նրա բարձրագույն տեսակները կապված են խոսքի հետ: Մտածողությունը իրենից ներկայացնում է <<մտքերի ու զուգորդությունների նպատակաուղղված հոսք, որը կարող է հանգեցնել իրականության հանդեպ եզրակացության>>: Ճանաչողական բազմաթիվ գիտնականների կողմից՝ Ռուբինշտեյն, Դունկեր,Զելց և այլոք:

Քննադատական մտածողություն:Նպատակն ու խնդիրները

Չնայած այն համընդհանուր համաձայնությանը, թե որքան կարևոր է քննադատական մտածողությունը, վերջինիս միասնական սահմանում թերևս չկա:Հայերենում խնդիրն առավել բարդ է,քանի որ տերմինը հայերեն է թարգմանվում անգլերենից և գոյություն ունեցող թարգմանությունը հաճախ չի արտացոլում այն ընդգրկուն հասկացությունը, որը ներդրված է անգլերեն տերմինի մեջ:Այսպես հայերենում ,,Քննադատական մտածողությունը,, ենթադրում է պարտադիր քննադատություն խնդրո առարկայի շուրջ,մինչդեռ ,critical thinking, արտահայտությունն առավել ընդգրկուն է և ենթադրում է քննողական մոտեցում,այսինքն, խնդրո առարկայի բազմակողմանի քննարկում:Հետևաբար առավել նպատակահարմար կլինի եթե ,critical thinking,-ը թարգմանվեր ,,քննողական մտածողություն,,: Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է,որպես ,,ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել ,,: Միքայել Սկրիվենը և Ռիչարդ Փոլը նշում են,որ քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և /կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու և գնահատելու մտավոր գործընթացը, որը ծառայում է որպես ուղեցույց անհատի համոզմունքների ձևավորման և գործողությունների համար: Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը դրվում է դպրոցում աստիճանաբար,ուսումնառության յուրաքանչյուր փուլում: Դրա հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը:

Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է աշխարհայացք, որը դուրս է նախապաշարմունքներից , ինքնուրույն վերաբերմունք այս կամ այն երևույթների հանդեպ: Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ:

Ավագ դպրոցում սովորողների քննադատական մտածողության զարգացման համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները, աշխատանքի ձևերը՝

աշխատանքում, ուսումնական և կենսական իրավիճակներում, գործնականում սովորողներին մղել ուսումնական նյութի շուրջ կանխատեսելու, մեկնաբանելու, ապացուցելու, իր բառերով արտահայտելու, վերլուծելու, համադրելու, համեմատելու, ժխտելու, հիմնավորելու, փաստարկելու, պատճառահետևանքային կապերը գտնելու, արժևորելու, փաստերի հիման վրա եզրահանգելու, հարցեր ձևակերպելու և այլն,

տարբեր թեմաներին նվիրված էսսեները, գիտական, գիտահանրամատչելի նյութերի վերաբերյալ կարծիքները, համառոտ և ընդարձակ գրախոսությունները,

երկրում, տարածաշրջանում քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, կրթական, մարզամշակութային հարցերի վերաբերյալ քննարկումները, խոսքի՝ համապատասխան ոճին բնորոշ լեզվաքերականական միջոցներով համարժեք ձևակերպումները,

գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի, հեռուստահաղորդումների, սոցիալական հոլովակների, արդիական թեմաների վերաբերյալ համացանցային նյութերի քննարկումները, այդ նյութերի արժանահավատության ստուգումը տարբեր աղբյուրներով, գրքի, ֆիլմի կերպարի կամ կերպարների, վերջաբանի, գործողությունների զարգացումների, բախումների լուծման, վերջաբանի վերաբերյալ գրավոր և բանավոր կարծիքը, արտահայտված կարծիքի քննարկումը, մեկնաբանումը, հիմնավորումը:

Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր՝ թեկուզ փոքրիկ ներդրումը:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Քննադատական մտածողության զարգացումը անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում

Քննադատական մտածելակերպը պարբերաբար կասկածելու, լսածը կամ կարդացածը ստուգելու և կեղծ ինֆորմացիան զտելու ունակությունն է՝ ոչինչ լռելյայն ի հավատ չընդունելով: Չմոռանանք նաև գլխավորն առանձնացնելու, դեպքերը կամ երևույթներն իրար հետ ընդհանրացնելու և համեմատելու ունակության մասին: Բացի դրանից քննադատական մտածողությունը իր մեջ ներառում է սխալվելու իրավունքը, քանի որ մեր տեսանկյունը նույնպես կարող է լինել իրականությունից շատ հեռու, դա նշանակում է, որ այն նույնպես պետք է կասկածի տակ դնել: Եթե դուք ունեք այդ ունակությունը, ապա կարողանում եք քննադատորեն մտածել:

«Քննադատական մտածողության» սկզբունքի հիմնադիրներից է համարվում 20-րդ դարասկզբի ամերիկացի փիլիսոփա և ուսուցիչ Ջոն Դյուին: Իր հետազոտությունների մեջ Դյուին նկարագրել է մեթոդներն ու գործիքները, որոնք թույլ են տալիս մարդուն բազմաբնույթ խնդիրներ լուծել: Նա օգտագործել է «հետազոտություն» հասկացությունը (անգլ. inquiry) նկարագրելու անհասկանալի խնդրահարույց իրավիճակը լավ մտածված և, հետևաբար, լուծելի խնդիր դարձնելուն ուղղված գործողությունների ամբողջությունը: Այստեղ պետք է մի քանի հաջորդական քայլեր անել. ձևակերպել խնդիրը (այսինքն՝ դժվարության էությունը), առաջ քաշել վարկածներ և ստուգել դրանք սեփական գործողությամբ:

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել ենք, որ մեր

փոքրահասակ սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

Զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են,

Ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին,

Հարգանքով լսեն բազմազան կարծիքներ,

Պատրաստ լինեն և ձևակերպել, և հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:

Այս ամենը հաշվի առնելով՝ ընթերցանության ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի հետևյալ պայմանների առկայությամբ.

1. Բնագիրը պետք է լինի ծավալով ոչ շատ մեծ՝ պարզ, մատչելի, թեման հոգեհարազատ, գաղափարը՝ հասկանալի:

2. Ինքնուրույն ընթերցանության համար ընտրված գրքերը գեղարվեստական ձևավորմամբ

3. Լինեն այնպիսին, որ երեխաները հետաքրքրվեն սյուժեով

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս պետք է ավագ դպրոցականների մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ: Նպաստել նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը: Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք դժվարանում են կարդալ անգլերեն լեզվով ու շատ քիչ բան են հասկացել: Վատ ընկալունակությունը

բացատրվում է պարզ պատճառով, պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Ուսուցիչներս տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին՝ կարող ենք օգնել աշակերտներին՝ խորհել կարդացածի մասին:

Հետազոտությունը կատարել եմ 10-րդ դասանում, որտեղ սովորում էին 22 աշակերտ / 21 աղջիկ, 1 տղա/: Դասի թեման էր ,,Մաթիլդա,,:

Սեպտեմբերին աշակերտներին հանձնարարվեց կարդալ գեղարվեստական գիրք անգլերեն լեզվով, որը միտված էր զարգացնել սովորողի լեզվի ընկալունակությունը և թեման ինքնուրույն հասկանալու և վերլուծելու հմտությունները:

Այնուհետև աշակերտներից պահանջվեց թղթապանակ պատրաստել տվյալ գրքի վերաբերյալ հետևյալ թեմաները ընդգրկելով՝

Վեպի վերլուծությունը

Հեղինակի մասին

Վեպի մանրակերտը

Մեր տպավորությունը

Գլխավոր հերոսի բնութագիրը

Նամակ հերոսին

Աշակերտները մեկ ու կես ամիս անց հերթով ներկայացնում են իրենց պորտֆոլիոն և համեմատում իրենց կարծիքները գրքի վերաբերյալ: Ինքնուրույն ընթերցանության նման ձևով կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որպեսզի աշակերտների մեջ արթնանա ընթերցանության հանդեպ սեր, նրանք գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան ընթերցանության միջոցով ինքնուրույն գիտելիքներ և վերահսկեն իրենց ընթերցածը:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները խմբավորվել են նաև հիմք ընդունելով «Հանրակրթության պետական չափորոշչի բաղադրիչները: Այսպես, օրինակ՝

• գիտելիքների համակարգ ձևավորող մեթոդներն են' մտավոր գրոհ, փոխգործուն նշաններ, խմբավորում և այլն:

• ճանաչողական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են' Վեննի դիագրամ, խորանարդում, քառաբաժանում, պրիզմա, մանրապատում /կմախք/ և այլն:

• հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են' հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, «Հաստ» և «բարակ» հարցեր և այլն:

• համագործակցային կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են' ջիգսո /խճանկար/, շրջանաձև շարադրանք և այլն:

• ստեղծագործական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են' հնգյակ, բանալի բառեր, աքրոստիկոս և այլն:

• ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են' ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒՍ/, երկու աստղ և մեկ ցանկություն և այլն:

• արժեքային համակարգ ձևավորող մեթոդներն են' ռուբրիկ, հեղինակի աթոռ մեթոդները:

Եզրակացություն

Եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները

Կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք:

Կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի:

Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը կդառնա աշակերտը/ աշակերտակենտրոն ուսուցում/

Աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ:

Կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում:

Կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն:

Քննադատական մտածողությունն արտահայտվում է այն հատկանիշների և կարողությունների տիրապետմամբ, որոնք պայմանավորում են անձի տրամաբանական մտածողության, գնահատողական վերաբերմունքի, ռեֆլեքսիայի բարձր մակարդակը: Դիպուկ է բնութագրված հետևյալ մտքում. «Քննադատական մտածողությունը մտածողություն է մտածողության մասին, երբ Դուք դատում եք՝ Ձեր մտածողությունը կատարելագործելու նպատակով»:

Գրականության ցանկ

Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004

ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինստիտուտ: Ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր, 2007:

Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002

https://postnauka.org/wtf/157181